ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» օգոստոսի 2020թ. № 208

ԱՐՄԻՆԵ ԶԱԼԻՆՅԱՆԻՆ «ՍՊԻՏԱԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «զ» կետով, հաշվի առնելով, որ Արմինե Զալինյանը «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակվել է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի խախտումով՝ *որոշում եմ.*

1.2020 թվականի օգոստոսի 6-ին «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Զալինյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին կնքած աշխատանքային պայմանագիրը: Վերջին աշխատանքային օր համարել 2020 թվականի օգոստոսի 5-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմինե Զալինյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» օգոստոսի 2020թ. № 209

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ԹԻՎ 229 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ որոշում եմ.

1. Ստեղծել Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող և Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետության սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Գագիկ Սահակյան - Սպիտակ համայնքի ղեկավար

Աճուրդավար՝

Վարդան Սահակյան - Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ

Արձանագրող՝

Լուսինե Համբարյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Հենրիկ Միրզոյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ

Արման Ավետիսյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ

Գարիկ Աբգարյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ

Սարգիս Թամամյան – Սպիտակ համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ)

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2015 թվականի հունիսի 26-ի «Սպիտակի համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդով օտարելու նպատակով աճուրդի կազմակերպիչ և արձանագրող լիազորելու մասին» թիվ 229 որոշումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 5
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» օգոստոսի 2020թ. № 210

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետով, 53-րդ կետի «գ» ենթակետով և 55-րդ կետով, հաշվի առնելով, որ Արշալույս Բագրատի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին տրամադրվել է «ք.Սպիտակ, Թաքուններ հանդամաս փողոց վարելահող և բնակելի տուն» հասցեն, սակայն անշարժ գույքը գտնվում է Սպիտակ համայնքի Շիրակի խճուղու վրա, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05082020-06-0021 վկայականը և Արշալույս Բագրատի Ասատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արշալույս Բագրատի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Շիրակի խճուղու վրա գտնվող 06-006-0101-0014 կադաստրային ծածկագրով 1,1694 հեկտար մակերեսով հողամասի, դրա վրա գտնվող 06-006-0101-0014-001 կադաստրային ծածկագրով 47,8 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան և 06-006-0101-0014-002 կադաստրային ծածկագրով 52 քառակուսի մետր մակերեսով մառանի «ք.Սպիտակ, Թաքուններ հանդամաս փողոց վարելահող և բնակելի տուն» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Շիրակի խճուղի, թիվ 153» հասցեով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 7
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«07» օգոստոսի 2020թ. № 211

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 179 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 179 որոշման կից ցուցակում Նորայր Հովհանեսի Գրիգորյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Հովհաննեսի», հիմք ընդունելով Նորայր Գրիգորյանի մահվան վկայականը և Նորայր Գրիգորյանի որդու՝ Հովիկ Նորայրի Գրիգորյանի ներկայացուցիչ Սասուն Կոտոշյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի նոյեմբերի 25-ի «Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան և Առափնյա փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 179 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման կից ցուցակի 199-րդ տողում նշված «Հովհաննեսի» բառը փոխարինել «Հովհանեսի» բառով:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 7
ք.Սպիտակ